Երրորդ ընթերցում
Նախագիծ
Կ-1018[3]-11.11.2010,07.12.2010-ՏՀ-010/3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

<ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <Պետական տուրքի մասին> Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 1-ին մասի <ժբ> կետի <19.2> թվից հետո լրացնել <,19.4> թիվը:

Հոդված 2. Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքը լրացնել նոր 19.4 հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ.

<Հոդված 19.4. Պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և օգտակար հանածոների օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար պետական տուրքի դրույքաչափերը

1. ազնիվ, գունավոր և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 10000-ապատիկի չափով
2. վառելիքաէներգետիկ հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
3. շինանյութերի արտադրության հումքի, այդ թվում՝ երեսպատման, շինարարական քարերի, լցանյութերի և բալաստային հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
4. գունագեղ քարերի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 10000-ապատիկի

	չափով
5. մետաղագործական, քիմիական, թեթև և արդյունաբերության այլ ճյուղերի հումքի յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 10000-ապատիկի չափով
6. հանքային ջրերի յուրաքանչյուր հանքավայրի կամ հանքահորի՝	
- արդյունաբերական (շշալցման) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 5000-ապատիկի չափով
- արդյունաբերական (ածխաթթու գազ ստանալու) նպատակով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
-բուժական (ռեկրեացիոն) նպատակներով օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար՝ տարեկան	բազային տուրքի 500-ապատիկի չափով
7. ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար՝	
ֆիզիկական անձանցից	բազային տուրքի չափով
իրավաբանական անձանցից	բազային տուրքի 10-ապատիկի չափով
8. ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման համար՝	
ֆիզիկական անձանցից	բազային տուրքի չափով
իրավաբանական անձանցից	բազային տուրքի 10-ապատիկի չափով>

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից: